ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄՈՒՍԱԼԵՌԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
АРМАВИР МАРЗ
МЕРИЯ СЕЛА
МУСАЛЕР

REPUBLIC OF ARMENIA, ARMAVIR MARZ, VILLAGE HALL OF MUSALER

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Նաիրի 2Ա
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

25.11.2014թ.
թիվ. 221

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Ձեզ է ուղարկվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 10 նիստի որոշումները:

Առդիր՝ 26 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Նաիրի 2Ա
էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» նոյեմբերի 2014թվականի N 53

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով՝ համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 10 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԿՈՂՄ (7)		ԴԵՄ (0)	ՁԵՌՆՊԱՀ (0)
Ք. Հակոբյան			
Խ. Մկրտումյան			
Ա. Սարգսյան			
Հ. Սամվելյան			
Հ. Միքայելյան			
Ա. Ֆարֆարյան			
Ռ. Թամազյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի N 53 ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1. ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3. ԱՌԵՎՏՐԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՆՆԴԻ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6. 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ <ՄՈՒՍԱԼԵՌԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՅԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7.ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8. ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

9. ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

10. ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

11.ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԹԻՎ 71-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13.ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 29-Ի N50-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15. «ՄՈՒՍԱԼԵՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ «ՄՈՒՍԱԼԵՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյուղապետարանի աշխատակազմի
Քարտուղար

Գ. Մարտիրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Նաիրի 2Ա
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» նոյեմբերի 2014թվականի N 54-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով՝ համայնքի ավագանին *որոշում է.*

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի վարչական տարածքում 2015թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

	ԿՈՂՄ (7)	ԴԵՄ (0)	ՁԵՌՆՊԱՀ (0)
Ք. Հակոբյան			
Խ. Մկրտումյան			
Ա. Սարգսյան			
Հ. Սամվելյան			
Հ. Միքայելյան			
Ա. Ֆարֆարյան			
Ռ. Թամազյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2014ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի
N54-Ն ՈՐՈՇՄԱՆ

ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝
հիմնական օբյեկտների համար՝
1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 /յոթ հազար հինգ հարյուր/ դրամ.
2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15 000 /տասնհինգ հազար/ դրամ.
բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25 000 /քսանհինգ հազար/ դրամ.
գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ.
դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50 000 /հիսուն հազար/ դրամ.
ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝
3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 /հազար հինգ հարյուր/ դրամ.
4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1500 /հազար հինգ հարյուր/ դրամ.
2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին

ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար « Տեղական տուրքերի և վճարների մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2000 /երկու հազար/ դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 2000 /երկու հազար / դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 0 /զրո/ դրամ.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրացված առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150 000/մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ:

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50 000 /հիսուն հազար/ դրամ.

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 6000 /վեց հազար/ դրամ.

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1000 /հազար/ դրամ.

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50 000 /հիսուն հազար/ դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24^{00}-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 25 000 /քսանհինգ հազար/ դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 /հիսուն հազար/ դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 /երկու հարյուր հազար/ դրամ.
4) խաղատների կազմակերպման համար՝ 1 000 000 /մեկ միլիոն/ դրամ.
5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ.
6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 /մեկ հարյուր հազար/ դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝
1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 /մեկ հազար/ դրամ.
2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավել ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ.
3) այլ արտաքին գովազդի համար՝ 500 /հինգ հարյուր/ դրամ.
4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 /յոթ հարյուր/ դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 1 000 /մեկ հազար/ դրամ:

Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար 50000 /հիսուն հազար/ դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 1 000 /մեկ հազար/ դրամ:
Տեղական վճար է սահմանվում.

11. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3 000 /երեք հազար/ դրամ:

12. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3 000 /երեք հազար/ դրամ:

13. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել 3 000/ երեք հազար/ դրամ:

Գյուղապետարանի աշխատակազմի
քարտուղար Գ. Մարտիրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Նսիրի 2Ա
էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

ՈՐՈՇՈՒՄ

«20» նոյեմբերի 2014թվականի N55-Ն

ԱՌԵՎՏՐԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՆՆԴԻ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով՝ համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հաստատել առևտրի, հասարակական սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտի գործունեության Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքային կանոնները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԿՈՂՄ (7)		ԴԵՄ (0)	ՁԵՌՆՊԱՀ (0)
Ք. Հակոբյան			
Խ. Մկրտումյան			
Ա. Սարգսյան			
Հ. Սամվելյան			
Հ. Միքայելյան			
Ա. Ֆարֆարյան			
Ռ. Թամազյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2014ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի
N 55-Ն ՈՐՈՇՄԱՆ

ԿԱՆՈՆՆԵՐ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՆՆԴԻ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂՈՐՏԻ ԳՈՐԾՆԱԿՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1.Համայնքի տարածքում առևտուրն իրականացվում է առևտրի օբյեկտներում՝ խանութներում, կրպակներում, տաղավարներում, հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում, ինչպես նաև առևտրի իրականացման վայրերում՝ առևտրի կենտրոնում, ինչպես նաև առևտրի իրականացման վայրերում՝ առևտրի կենտրոններում, սպառողական ապրանքների շուկաներում, տոնավաճառներում, բացօթյա առևտրի վայրերում և շրջիկ առևտրի կետերում:

2. Սպառողի /գնորդի/ կողմից գնված պատշաճ և ոչ պատշաճ ապրանքների փոխանակում կամ դրանց համար վճարված դրամի վերադարձումը և վերահաշվարկն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

3.Տոնավաճառներ կազմակերպվում են համայնքի կողմից օրենքով սահմանված կարգով, միայն շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված տոնական օրերին:

4. Համայնքի տարածքում դեղերի վաճառքն իրականացվում է դեղատների միջոցով:
Գնորդին վաճառված պատշաճ որակի դեղերը ենթակա չեն փոխարինման կամ վերադարձման:

5. Վաճառողի կողմից սննդամթերքի կշռափաթեթավորում կատարելիս , ելնելով տվյալ ապրանքատեսակի առանձնահատկությունից, փաթեթավորման համար օգտագործվում է հիգենիկ և հակահամաճարակային ծառայության կողմից թույլատրված նյութերից պատրաստված փաթեթավորման միջոցներ: Փաթեթավորվող սննդամթերքի փաթեթի կամ մեջդիրի պիկատների վրա նշվում են ապրանքի անվանումը, տեսակը, քաշը, մեկ կիլոգրամի արժեքը և կշռափաթեթավորված քաշի վաճառքի գինը, փաթեթավորման օրը, նաև պիտանելիության ժամկետը:

6.Հացի և հացաբուլկեղենի մանրածախ առևտուրն իրականացվում է հացի հացաբուլկեղենի մասնագիտացված խանութներում , առանձնացված տաղավարներում, կրպակներում, սննդամթերքի մասնագիտացված խանութների առանձնացված բաժիններում, սպառողական ապրանքների և գյուղատնտեսական ապրանքների շուկաների տարածքում գտնվող առանձնացված առևտրի օբյեկտներում , իսկ մանր կշռափաթեթավորված հատային ապրանքների նաև շրջիկ առևտրի կետերի միջոցով:

II. ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1.Հանրային սննունդը՝ խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման սպառման կազմակերպումն է՝ հատուկ կահավորված տարածքում:

2.Մատուցողի ներկայացված հաշվում /որի երկրորդ օրինակը սահմանված կարգով մնում է վաճառողի մոտ/ նշվում է նրա անունը, ազգանունը, սպասարկման օրը, կերակերատեսակների խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի, հացաբուլկեղենի, գնովի ապրանքների անվանումները, քանակը, գանգվածը և վճարման ենթակա ապրանքների վերջնական գինը:

III. ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1.Կենցաղային ծառայությունը սպառողների կենցաղային կարիքների բավարարման համար՝ նրանց պատվերով կատարողի կողմից մատուցվող ծառայություն է:

2.Կենցաղային ծառայության օբյեկտներում՝ սպառողներին տեսանելի տեղում, փակցվում է մատուցվող ծառայությունների գնացուցակը:

3.Կենցաղային ծառայության օբյեկտներում ծառայությունների պատվերների ընդունման տեղը և ձևը որոշում է կատարողը:

Գյուղապետարանի աշխատակազմի
քարտուղար Գ. Մարտիրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Նաիրի 2Ա
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» նոյեմբերի 2014թվականի N56-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 19-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին *որոշում է.*

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի կողմից 2015 թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

	ԿՈՂՄ (7)	ԴԵՄ (0)	ՁԵՌՆՊԱՀ (0)
Ք. Հակոբյան			
Խ. Մկրտումյան			
Ա. Սարգսյան			
Հ. Սամվելյան			
Հ. Միքայելյան			
Ա. Ֆարֆարյան			
Ռ. Թամազյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2014ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի
N 56-Ն ՈՐՈՇՄԱՆ

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2015ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Համայնքային ենթակայության մանկապարտեզում երեխաների պահպանման համար ծնողական վճար սահմանել հինգ հազար դրամ.

1) բնակչության առանձին խմբերի համար վճարների արտոնություններ սահմանել հետևյալ չափերով՝

ա. միակողմանի ծնողազուրկ համայնքի բնակիչ հանդիսացող երեխաների համար՝ երկու հազար դրամ.

բ. երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար՝ անվճար.

գ. փարոսի համակարգում ընդգրկված ընտանիքների երեխաների համար՝ երկու հազար դրամ:

2. Աղբահանության վճար սահմանել՝ համայնքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական հարյուր դրամ.

1) Արտոնություններ սահմանել հետևյալ չափերով՝

ա. փարոսի համակարգում ընդգրկված ընտանիքների անձանց համար՝ ամսական հիսուն դրամ.

գ. հինգ և ավելի անդամ ունեցող ընտանիքների ամսական գումարի չափ սահմանել հինգ հարյուր դրամ:

Գյուղապետարանի աշխատակազմի
քարտուղար Գ. Մարտիրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Նաիրի 2Ա
էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» նոյեմբերի 2014թվականի N57

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, 31-րդ հոդվածով, 27-րդ հոդվածի առաջին կետի 2-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին *որոշում է*.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի ղեկավարի աշխատավարձը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

	ԿՈՂՄ (7)	ԴԵՄ (0)	ՁԵՌՆՊԱՀ (0)
Ք. Հակոբյան	----------	----------	----------
Խ. Մկրտումյան	----------	----------	----------
Ա. Սարգսյան	----------	----------	----------
Հ. Սամվելյան	----------	----------	----------
Հ. Միքայելյան	----------	----------	----------
Ա. Ֆարֆարյան	----------	----------	----------
Ռ. Թամազյան	----------	----------	----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի N 57 ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ

h/h	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաստիքային միավորը	Պաշտոնի դրույք.
1	Համայնքի ղեկավար	1	270 000

Գյուղապետարանի աշխատակազմի
քարտուղար Գ. Մարտիրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Նաիրի 2Ա
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» նոյեմբերի 2014թվականի N58

2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ <ՄՈՒՍԱԼԵՌԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հաստատել 2015թվականի համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N1 հավելվածի:
2. Հաստատել 2015թվականի համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Մուսալեռի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N2 հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

	ԿՈՂՄ (7)	ԴԵՄ (0)	ՁԵՌՆՊԱՀ (0)
Ք. Հակոբյան			
Խ. Մկրտումյան			
Ա. Սարգսյան			
Հ. Սամվելյան			
Հ. Միքայելյան			
Ա. Ֆարֆարյան			
Ռ. Թամազյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի N 58ՈՐՈՇՄԱՆ

2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների քանակը՝ 13
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

h/h	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաստիքային միավորը	Պաշտոնի դրույք.
1	Համայնքի ղեկավար	1	270 000
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	135 000
3	Աշխատակազմի քարտուղար	1	150 000
	ԱՇԽԱՏԱԿԱԶՄ		
1	Առաջատար մասնագետ	5	125 000
2	I կարգի մասնագետ	1	115 000
	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
1	Հավաքարար	0.75	80 000
2	Բանվոր ծառայող	2	80 000
3	Գործավար	1	80 000
Ընդամենը			

Գյուղապետարանի աշխատակազմի
քարտուղար Գ. Մարտիրոսյան

ՀԱՎԵԼՎԱԾ N2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի N 58ՈՐՈՇՄԱՆ

2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների քանակը՝ 16
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

h/h	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաստիքային միավորը	Պաշտոնի դրույք.
1	Մանկապարտեզի տնօրեն	1	100000
2	Հաշվապահ	0.5	71000
3	Դաստիարակ	2	92600
4	Երաժշտության դաստիարակ	0.5	92600
5	Խոհարար	1	66140
6	Խոհարարի օգնական	0.5	71000
7	Օժանդակ բանվոր	1	66140
8	Դաստիարակի օգնական	2	75000
9	Դռնապահ	1	71000
10	Տնտեսվար	0.5	80000
11	Հաշվետար-գանձապահ	0.5	71000
12	Գործավար	0.5	71000
13	Պահակ	2	73200

Գյուղապետարանի աշխատակազմի
քարտուղար Գ. Մարտիրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Նաիրի 2Ա
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» նոյեմբերի 2014 թվականի N 59

ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Մուսալեռի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության համար ներքոհիշյալ ապրանքները ձեռք բերելու նպատակով տրամադրել գումար՝ համաձայն հավելվածի.

հ/հ	Ապրանքատեսակը	քանակը	գինը
1	Ծածկոց	30 հատ	180 000
3	Կախիչ	1 հատ	25 000
4	Գրապահարան	1 հատ	70 000
5	Հեռուստացույց	1 հատ	130 000
6	Նոր տարվա լույսեր, փայլեր		190 000

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԿՈՂՄ (7)		ԴԵՄ (0)	ՁԵՌՆՊԱՀ (0)
Ք. Հակոբյան			
Խ. Մկրտումյան			
Ա. Սարգսյան			
Հ. Սամվելյան			
Հ. Միքայելյան			
Ա. Ֆարֆարյան			
Ռ. Թամազյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Նաիրի 2Ա
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» նոյեմբերի 2014 թվականի N 60

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով ղեկավարի առաջարկությունը՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1.Դրամական օգնություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի ֆինանսապես անապահով բնակիչ Հակոբ Մալխասյանին՝ 20 000դրամ, Վլադիմիր Շլյագերին՝ 25000 դրամ:
2. Բուժման նպատակով դրամական օգնություն տալ Հայաստան Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական բնակիչ Գորիս Կարապետյանին 70 000դրամ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

	ԿՈՂՄ (7)	ԴԵՄ (0)	ՁԵՌՆՊԱՀ (0)
Ք. Հակոբյան			
Խ. Մկրտումյան			
Ա. Սարգսյան			
Հ. Սամվելյան			
Հ. Միքայելյան			
Ա. Ֆարֆարյան			
Ռ. Թամազյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Նաիրի 2Ա
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» նոյեմբերի 2014 թվականի N 61

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով «Էջմիածնի ավտոդպրոց» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2014 թվականի հոկտեմբերի 13-ին ուղարկված թիվ 08/30 գրությունը՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. «Էջմիածնի ավտոդպրոց» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում սովորող զորակոչիկ, Մուսալեռի գյուղական համայնքի բնակիչ Հովհաննես Վահրամի Գասպարյանի երթևեկության ծախսերը հոգալու նպատակով տալ դրամական օգնություն տալ 20 000դրամ:
2. Գումարը տրամադրել Հովաննես Գասպարյանի հորը՝ Վահրամ Գասպարյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԿՈՂՄ (7)		ԴԵՄ (0)	ՁԵՌՆՊԱՀ (0)
Ք. Հակոբյան			
Խ. Մկրտումյան			
Ա. Սարգսյան			
Հ. Սամվելյան			
Հ. Միքայելյան			
Ա. Ֆարֆարյան			
Ռ. Թամազյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Նաիրի 2Ա
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» նոյեմբերի 2014 թվականի N 63

ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով նախահաշիվը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի մանկապարտեզի նախամուտքի, հատակի վերանորոգման, զուգարանակոնքերի նորոգման խմելու ջրի ավտոմատի փոխելու համար տրամադրել 321100 դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

	ԿՈՂՄ (7)	ԴԵՄ (0)	ՁԵՌՆՊԱՀ (0)
Ք. Հակոբյան	----------	----------	----------
Խ. Մկրտումյան	----------	----------	----------
Ա. Սարգսյան	----------	----------	----------
Հ. Սամվելյան	----------	----------	----------
Հ. Միքայելյան	----------	----------	----------
Ա. Ֆարֆարյան	----------	----------	----------
Ռ. Թամազյան	----------	----------	----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Նաիրի 2Ա
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» նոյեմբերի 2014 թվականի N 64-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԹԻՎ 71-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, Իրավական ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի առաջին կետով, ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 792-Ն որոշմամբ, և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի ավագանու 2013թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 71-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) «Համայնքի բյուջեի եկամուտների» 1257 (պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)) տողում ավելացնել 98.4 հազար դրամ:
2) «Համայնքի բյուջեի եկամուտներ» 1137 (համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար) տողում պակասեցնել 12,0 հազար դրամ:
3) «Համայնքի բյուջեի եկամուտներ» 1393 (Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ) տողում պակասեցնել 30.0 հազար դրամ:
4) Վարչական բյուջեի 11բաժին 1 խումբ 2 դաս հոդված 4891 (պահուստային միջոցներ) պակասեցնել 2300,0 հազար դրամ:
5) Վարչական բյուջեի 01բաժին 1 խումբ 1 դաս հոդված 4111 (աշխատողների աշխատավարձեր) ավելացնել 1417.4 հազար դրամ:
6) Վարչական բյուջեի 01բաժին 1 խումբ 1 դաս հոդված 4212 (էներգետիկ ծառայություններ) ավելացնել 400.0 հազար դրամ:
7) Վարչական բյուջեի 01բաժին 1 խումբ 1 դաս հոդված 4252 (մեքենա սարքավորումների ընթացիկ վերանորոգում) ավելացնել 19.0 հազար դրամ:
8) Վարչական բյուջեի 01բաժին 6 խումբ 1 դաս հոդված 4216 (գույքի և սարքավորումների վարձակալություն) ավելացնել 230.0 հազար դրամ:

9) Վարչական բյուջեի 01բաժին 6 խումբ 1 դաս հոդված 4251 (շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում) ավելացնել 290.0 հազար դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից 10 օր հետո:

	ԿՈՂՄ (7)	ԴԵՄ (0)	ՁԵՌՆՊԱՀ (0)
Ք. Հակոբյան	----------	----------	----------
Խ. Մկրտումյան	----------	----------	----------
Ա. Սարգսյան	----------	----------	----------
Հ. Սամվելյան	----------	----------	----------
Հ. Միքայելյան	----------	----------	----------
Ա. Ֆարֆարյան	----------	----------	----------
Ռ. Թամազյան	----------	----------	----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Նաիրի 2Ա
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» նոյեմբերի 2014 թվականի N 65,

ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով նախահաշիվները և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի Դվին թաղամասի լուսավորության համակարգի վերանորոգման համար տրամադրել 227 250դրամ:
2. Գ. Լուսավորիչ փողոցի լուսպվորության համակարգի վերանորոգման համար տրամադրել 349750 դրամ:
3. Թումանյան փողոցի լուսավորության համակարգի վերանորոգման համար տրամադրել 36250 դրամ:
4. Երևանյան 1 փողոցում գիշերային լուսավորություն անցկացնելու համար տրամադրել 993 000դրամ:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

	ԿՈՂՄ (7)	ԴԵՄ (0)	ՁԵՌՆՊԱՀ (0)
Ք. Հակոբյան	----------	----------	----------
Խ. Մկրտումյան	----------	----------	----------
Ա. Սարգսյան	----------	----------	----------
Հ. Սամվելյան	----------	----------	----------
Հ. Միքայելյան	----------	----------	----------
Ա. Ֆարֆարյան	----------	----------	----------
Ռ. Թամազյան	----------	----------	----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Նաիրի 2Ա
էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» նոյեմբերի 2014 թվականի N 66-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 29-Ի N50-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Իրավական ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածի առաջին մասով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Չեղյալ ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի ««Մուսալեռի բժշկական ամբուլատորիա» Փակ բաժնետիրական ընկերությունը «Մուսալեռի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության վերակազմավորման մասին» N50-Ա որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

	ԿՈՂՄ (7)	ԴԵՄ (0)	ՁԵՌՆՊԱՀ (0)
Ք. Հակոբյան	----------	----------	----------
Խ. Մկրտումյան	----------	----------	----------
Ա. Սարգսյան	----------	----------	----------
Հ. Սամվելյան	----------	----------	----------
Հ. Միքայելյան	----------	----------	----------
Ա. Ֆարֆարյան	----------	----------	----------
Ռ. Թամազյան	----------	----------	----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Նաիրի 2Ա
էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» նոյեմբերի 2014 թվականի N 67-Ա

«ՄՈՒՍԱԼԵՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ «ՄՈՒՍԱԼԵՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի առաջին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 14-րդ կետով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի հինգերորդ մասի, 24-րդ հոդվածի առաջին մասի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. «Մուսալեռի բժշկական ամբուլատորիա» Փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ ՓԲԸ) վերակազմավորման ձևով վերակազմակերպել «Մուսալեռի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՀՈԱԿ):
2. հաստատել «Մուսալեռի բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմավորման կարգը, պայմանները, տեղաբաշխված բաժնետոմսերի և այլ արժեթղթերի վարման կարգը.
3. Հաստատել «Մուսալեռի բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերության գույքի և գույքային իրավունքների՝ «Մուսալեռի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը փոխանցման ակտը, որում առկա են վերակազմակերպվող ընկերության գույքի և պարտատերերին ու պարտապաններին վերաբերող բոլոր պարտավորությունների իրավահաջորդության մասին դրույթներ:
4. Հաստատել համայնքի ղեկավարի կողմից ներկայացված «Մուսալեռի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող գույքի կազմը՝ համաձայն Հավելված 1-ի:

5. Ընկերության կողմից օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող շենքերն ու շինությունները, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Մուսալեռի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ դրանց նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու պայմանով՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի ղեկավարի հետ կնքված պայմանագրի հիման վրա:

6. Հաստատել համայնքի ղեկավարի կողմից ներկայացված «Մուսալեռի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը:

7. Կազմակերպության կառավարման, ինչպես նաև՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի երկրորդ մասի «է» ենթակետով ու 14-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի ղեկավարին:

8. «Մուսալեռի բժշկական ամբուլատորիա» Փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ ընկերության պարտատերերի առկայության դեպքում բոլորին օրենքով սահմանված կարգով ծանուցել ընկերության վերակազմավորման մասին:

	ԿՈՂՄ (7)	ԴԵՄ (0)	ՁԵՌՆՊԱՀ (0)
Ք. Հակոբյան	----------	----------	----------
Խ. Մկրտումյան	----------	----------	----------
Ա. Սարգսյան	----------	----------	----------
Հ. Սամվելյան	----------	----------	----------
Հ. Միքայելյան	----------	----------	----------
Ա. Ֆարֆարյան	----------	----------	----------
Ռ. Թամազյան	----------	----------	----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Նաիրի 2Ա
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» նոյեմբերի 2014 թվականի N 62

ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով ղեկավարի առաջարկությունը՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Մասնակցություն ունենալ Լոս-Անջելես քաղաքում նոյեմբերի 27-ին կայանալիք հերթական 2014թ. հեռուստամարաթոնին կատարելով դրամական աջակցություն՝ 50 000 դրամի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

	ԿՈՂՄ (7)	ԴԵՄ (0)	ՁԵՌՆՊԱՀ (0)
Ք. Հակոբյան	----------	----------	----------
Խ. Մկրտումյան	----------	----------	----------
Ա. Սարգսյան	----------	----------	----------
Հ. Սամվելյան	----------	----------	----------
Հ. Միքայելյան	----------	----------	----------
Ա. Ֆարֆարյան	----------	----------	----------
Ռ. Թամազյան	----------	----------	----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ